

ւոյն իմոյ սրբոյն Գրիգորի... հալածեալ հասի... ի կայանս սրբոյն Աստանդիանոսի... և գտի զհրաշագեղ մեկնութիւն Գործոց Առաքելոցն Մեծին Յոհաննու Ոսկերեանի... և հանդիպեալ հմտագոյն հռետորին Արարկոսի յունական և հայկական ուսմամբ պերճացեալ, և առատաձեռն պարգեւաւք ետու թարգմանել զտենչալիս ոգւոյ իմոյ»։ Ակա-յասէրի աշակերտներեց մէկը, անունով դարձեալ Արարկոս, մեծ զգուշութեամբ սրբագրում է իւր անուանակցի թարգմանութիւնը. «յիշեցէք զքրիստոսազգեաց երկրորդ լուսաւորիչն մեր զԳրիգորիս զհետեոյ սրբոյն Գրիգորի... և զիս զբազմամեղս Արարկոս որ բազում աշխատեցայ ի սայս, սակս ան-յարմար և խիրթն ի թարգմանութիւնս հռետորին յունականի, որ և ջանացի յերկրել միայն, ոչ յաւելուլ և ոչ պակասեցուցանել յաստուածաշունչ բանիցն. իսկ եթէ վեր ի վեր գոլով սորա այս մա-կացութիւն քան զմեր տեսութիւն և պակաս ինչ կամ այլ տարազ եղև, աղաչեմ չլինել մեղադիր»։ Միւսը, «որ ընդհանուր անուամբ խմբագիր կը կոչուի, յՈսկերեանէ և յԵփրեմէ քաղուած ըլլալուն հա-մար, և այս անուամբ ալ տպագրուած է ի Աննե-տիկ յամի 1839»։ Բեր ունեցածը առաջի թարգ-մանութիւնն է և գրուել է Յովհաննէս արքայեղ-բայր եպիսկոպոսի համար, գրուած նրա՝ «ձեռամբ իմով գրեցի» և ոմն Յակոբ գրչի ձեռքով։ Մինչև այժմ՝ յայտնի չէր թէ պահուած է բուն թարգ-մանութիւնը, որովհետև վերև առաջ բերած յի-

ս. Տես Ջարք. Հայկ. Հիմ Դպրութիւն. ք. 580—582 (1886); Տես. նաեւ Գ. Տպագ. 599—600.

ք. Ջարք. յ. Տ. ք. 581: